

ԽԱՐԵԼԱԿ

ՅԵՐԱՅԵՅԱՆ
ՅՈՑՔՈՐՈՒՄՅՈՑ

Գիկնի է 10 կ. Գաւառներում 12 կ. 1911, Շաբաթ, ՄԱՐՏԻ 19 -ին. Թիֆլիս. №12



— Ինձ թւում է, որ գիւղացիութիւնը հիմի աւելի վառ է ապրում, քան թէ առաջ՝ հորտութեան ժամանակ: ԱՄՏԵՆԻՃՈՒՅԵԱ

— Ի հարկէ, այն ժամանակ մենք նրանց մասին հայրաբար էինք մտածում:

— Իրանք էլ լաւ էին ապրում ու մենք էլ, և աւելի հոգսեր ունէինք. ինչո՞ւնքը գծրախոսացան. — ճիշտ է, կուտ ժողով համ ճէնն ուտում. սառ և ճէնն էլ հարտում:

Բ Ա Ց Ի Ա Ծ Է Բ Ա Ժ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ի Թ Ի Ի Ն

1911 թ.

VI Տարի

ՄԱԹԱԲԱԼԱ

VI Տարի

Երգիծարանական-սատիրական պատկերագրող շաբաթամթերթի

ԼՈՅՍ Է ՏԵՄԵՆՈՒՄ ԱՄԵՆ ՇԱԲԱԹ ԱՆՆԱՓԱՆ

Պաշտօնական օրգան պետական, ազգային, հասարակական և օտարազգի բոլոր մեծ և փոքր, յայտնի և անյայտ, պիտանի և անպիտան, փրկիչ և զլվիչ, անկեղծ և կեղծաւոր գործիչ-կորզիչների և խայտառակիչների:

Աճեցման քերք բոլոր բնագծիցների համար

«ԽԱԹԱԲԱԼԱ» շաբաթըն ծիծաղեցնում է, շաբաթըն էլ ցաւեցնում, բայց ոչ ոքի հետ ոչ բարեկամ է և ոչ թշնամի: Խմբագրին կարելի է տեսնել, երբ թեփերդ ուզի: Հասցէն՝ Тифлисы Музейный пер., Редакция „ХАТАБАЛА“:

Արտասահմանից՝ Tiflis Caucas edaction «Khatabala»

Խմբագիր-հրատարակող՝ ԱՍՏ. ԵՐԻՑԵԱՆ

«ԽԱԹԱԲԱԼԱ»-ի Բ Ա Ժ Ա Ն Ե Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

Տարեկան	5 ռ.
Կէս տարին	3 »
Երեք ամիսը	1 » 50 կ.
Ամիսը	— 50 »
Թիֆլիսում տարեկան	4 » —

«ԽԱԹԱԲԱԼԱ»-ի բաժանորդները կարող են ստանալ «ՍՈՒՐՉԱՆԴԱԿ» օրաթերթը պակաս վճարով, երկուսին միասին փոխանակ 15 ռ:

Տարեկան	12 ռ
Կէս տարին	6 ռ.
Երեք ամիսը	3 ռ. 50 կ.
Մէկ ամիսը	1 ռ. 20 կ.

100 տարով բաժանորդագրել ցանկացողին 75% զեղջ Չրի կարգացողներին պէտք է նկարենք գ լ ի ի վ ա յ Ր :

«ԽԱԹԱԲԱԼԱ»-ի ՕՐԱՑՈՑՑ

ԿԱՐՄԻՐ «ՎՕՉԳՈՒԽ»

տի ամեն բան էլ...»:

1911 ՄԱՐՏ 31 օր

Եթէ օրերը հեղ խոսե-
լիս տարերը հզում է յա-
տակին,
Գեո զա զա զա զա զա զա
Թէ նա համեմտ է:

19

Суббота **ՀԱՐԱԹ** Ծածօոո
Ղուանի 3

20 (կիր.) Որպէսզի չուժան մուտք չգործի Թիֆլիս, ուպրաւան ոչնչացնում է միներին. իսկ որպէսզի Թագա մօզնի շալաբներն էլ մուտք չգործեն Թիֆլիս, կըհարկաւորէ ոչնչացնել զրանց հագնողներին: Երկուսն էլ համագոր շարիներ են:

21 և **22** (բ. 2. և դ. 2.) Գ. Կալատուզօվը գնացել էր Մօսկւա նշանելու, բայց ինքը նրանց չէր հաւանել, նրանք էլ իրան: Հակառակի պէս էլ նշանի մատանին ճանապարհին գրպանից գողացել էին: Այսպէս որ նշանելու հարցը մնում է բաց: Երկիւղ կայ, որ սրանից առաջ չգայ բաց ու գրցի ինդիքը:

23 և **24** (դ. 2. և ե. 2.) Մի քանի ինտելի-գենտ անհատները մէջ մուտք է յղացել հրատարակել մի շքեղ ալբոմ, որը իր մէջ պարունակէր այն անձանց նկարները, որոնք աւելի բնորոշ հայ-հոյաբանութիւններ են գործածել 1910 թ. հայ մամուլում: Հետաքրքիր է թէ առաջին երեսում ուժ պատկերն են դնելու:

25 (ուրբ.) Հաւաքարի կիստոնները բանակցութեան մէջ են մտել մօղայի սիրահար մի քանի կանանց հետ, որպէսզի իրանց լէն շալաբները փոխանակեն նրանց նեղ դէշրաների հետ:

Յիշատակարան
Եթէ ուզում ես ամուսնանալ, կարճ օրերով վերայ ամուսնացիր, որովհետեւ շարքներից ամենափոքրագոյնը պէտք է ընտրել:

Աստղագէտ—տոմարագէտ և օրացոյցագէտ
Փարիմուզ

էն անցկացած կիրագի գրիլ էի, թէ՛ էլի կուլի, ջէր շատ կուլի... վա, խիարկէ կուլի:

Ու վունց չի, ախպէր. քանի էս վունց ու փունց կինքը կայ, քանի էս վիրննգնելու, անդէր ու մունդրէկ աշխարքը՝ բլրգալի պէս՝ ջէր էլի պտուտ է գալի ու բաթմիշ չէ ըլում, քանի իս ու դուն, իմ պատուական բարեկամ ու անպատիւ չարակամ, գեղնի է-րէսին սաղսալամաթ ման ինք գալի ու գեղին չինք մտնում, մապահաթ անելու բան մէզուլիս անպակաս կուլի:

«Կարմիր օթախ»-ի վրայ խօսեցինք, պըր-ճանք. զուրթ է գազէթներում փեշատեցին, թէ էս բանը էտպէս չէ էլի ու էտպէս է էլի, մագրում վիրջը դուս վուր էկաւ, վուր «մէ բան» էլիլ է:

Իս էնպէս իմ կարծում, «Կարմիր օթախ» բանը վուր սուտ դուս բերին՝ գուր-ճը միրաւօյ սուղէմէն օկրուժնի սուղը կու հասցնին. դուն մի վախենայ, էնպէս զօշաղ աղակատ ունիմ բռնած, վուր սաղ օկրուժնի սուղը շուռ ու մուռ կուտայ. էնպէս բանիւր կու մօզօնի, վուր վիրջը իս ու նա դրուտ դուս կուգանք ու սուղիէքը վուտից գլուխ միղաւուր. էնքան կու խօսի, էնքան ստատիէքի ու ցիրկուլների անուս կու տայ, էնքան սինօզ ու պալաթենիէ կօսի, վուր սուղիէքի գահլէն կէթայ գահլա ու կօսին՝ օզօնց կի միգմէն ձեռը վիկալ, ախպէր, միղաւուրը դուզիս մինք կուլինք...

Գուրճը դադելու համա գիղիս ինչ է մօզօնելու. «Թէ վուր կարմիր օթախը սուտ է, կօսէ, իս ունիմ, կօսէ, ուրիշ դօկումենտ, ուրիշ ֆակտ. էտ վօզղուլն է, ու դրամէն է, վուր օթախն էլ է կարմիր դառի, ու պաշ-

Հը, ինչ իք գարմանում. չիք աւտոճւմ. է, էտ վունց կուլի, գանա աղակատը կանայ սուտ խօսի:

Իս վուր փիքը իմ անում, խիբիս մէքիչ վուր գօս իմ տալի ու գուրճը քըքրում, տեհնում իմ, վուր նրա ասածը խիբիս մօզիկ է. էլի վուր քըքրում իմ (հուտեմէն չվախենաք) դուս է գալի, վուր զուրթ էլ ամէն տիղ կարմիր է, ան թէ՛ պաշտի կարմիր է:


Գանա չէ, բազի վուխտ, էս վից-օխտը տարւայ մէջը, իս էլ իմ խուրը, շատ խուրը, էտպէս մէ էրկու-իրեք հարուր սածէն խուրը փիքը արի ու դրուտան ասիմ՝ քիչ է մնացի, վուր գժւիմ:

Ու վունց չգժւիմ, տօ դրուտ էլ՝ աշխըր-քումը շատ ու շատ բան է կարմիր էլի... վիւրն ասիմ, վուրը թողնիմ, վուրը խոստովանիմ, զի անթիւ են լըբութինք մեր, անզգամութիւնք մեր, ջիրգիրութիւնք ու ջազուրագութիւնք մեր, կօսէր լացի ձէնով օզօրմած հոքի տէր կօմբալօն:

Մալադէց «Կարմիր օթախ» մօզօնօյ, մալադէց, իս ու իմ արիւր. քանի-քանիսի միտքը բաց արից, Թագա-Թագա, խուրը-խուրը, լաւ-լաւ բանիւր փիքը անիլ տից, քանի քանի խամ խալիսի ճանփայ շանց տւից...

Ըսկսինք:
էս անիծած, բրիշակ ըլելու աշխրքում էնպէս բանիւր է կատարում, էնպէս բաներ իմ տեհնում, վուր գլուխս քիչ է մնում պօլի չօտկ դառնայ...

Տօ, խալիս ինքը վուտից գլուխ կարմիր է էլի թուրմէ,—իս կի մինչկի հիմի գլխի չէի ննգնում. թէ դուք էլ գլխի չիք նընգ-



նում ու մէջքի ան փութի վրայ իք ննգած ու չիք աւտում՝ արա մէկին տկուրացրէք ու թամաշա արէք, դիպ էլ կարմիր չէ:

էլ ի՞նչի իք հիրու գնում. ամեն բան աշկարա է դառնում. մինք վուր վուտից գլուխ կարմիր ինք էլի, է՛հ, չէ՞ վուր վողգուխն էլ միգ համա է, հալթաթտա նա էլ կարմիր կուլի. մէ տիղ վուր կրուզում վողգուխը կարմիր ըլի՛ էլ ի՞նչը սիպտակ կուլի:

Արեգակը վուր արեգակ է, դուս գալու ու տուն գնալու վուխտը նա էլ կարմիր է:

Արեգակը կարմիր, ժամանակը կարմիր, չէր ու մէրիքը կարմիր, վարժապետները կանանչ ու կարմիր, տէրտէրները սիւ ու կարմիր, ջէնէլները կարմիր, պառաւնիքը կարմիր, նրանց արարմունքներն էլ կարմիր, մէ խօսկով՝ դիպ կարմիր ու կարմիր. ասէք տեհնիմ, խիղճ Թոմէն, Կլաւիէն, Պաւլէն ու Պէարէն բաս կարմիր չին ըլի՛:

Հա՛, քիչ էր մնում մոռանայի. էրէզ չէ՛ մէկէլ օրը, այ խալխ, ձիւր բայբաղը՝ մէքաշ վուր բաց էիք անում ու էլի յիգ թաքցնում՝ ի՞նչ բանդի էր, կարմիր չէր: Քուչէքում վուր մարթ էիք սպանում ու հաւի պէս գեպին գլորում՝ էն արունը վուր թափուում էր ի՞նչ բանդի էր, կանանչ էր թէ՛ մաւի. չէ՞ կարմիր էր: Պրակամացիէքը վուր փէշատում էիք. այ ցօցիալ-մկրատներ, խանդիսխան կարմիր չէիք փէշատում: Տնիքը վուր պաժար էին պցում, նրա ալին կարմիր չէր: էլի ասիմ. շատ վիվէսկանիք, մաղաղիէքի նեքսին ու դուսը, ստօյկէքը, գրքերու շապիկը... է՛հ, հէրիք է: Համա չէ, ինչի՛, էնպէս բանիք էլ կան, վուր դուրթ է կարմիր է, համա դուրեկան է:

Լաւ մարթը վուր ամանչում է մի բանից՝ էրէսը կարմիր չէ դառնում:

Մինձ մարդու վուր ուզում իք պատիւ տաք՝ վուտի տակը կարմիր մանուգ չիք պցում:

էլի ասիմ.

Մինձ պապը վուր գալիս է՝ դիպ միանա, ամենքդ էլ խօսկը մէկ արած, վուր պաս իք պահում (վճենց չէ, դիախ)՝ կարմիր լօրի չիք անուշ անում... այ, էստի էլ մէ սէկրէտ քաց անիմ. մարտ ամիսը խիստ քամի է իմանում ու զարմանալի բան է՝ մինձ պանն ու լօրի ուտիլը դիպ էտ ամսին է ըլում...

Կարմիր լօրու քամին էլ մնամ կարմիր կուլի, ու վողգուխի պակասն էլ նա կու թամամացնէ:

Տօ՛, լաւ մարթիկ, թէկի էքքան բան դիպ կարմիր դուս էկաւ, էլ ինչի՛ իք պահանջում, վուր Թաթուզն ու Մաթուզը, Պօղոսն ու Պետրուսը անպաճառ դիղին ըլին ու միղաւորի տիղը արգարը պատժի:

Վահ, վահ, էսէնց էլ բան կուլի՛, էսէնց էլ մատարաբաղ խալխ կուլի՛. տօ՛ իրանց արարմունքով իրանց վուրթկերանցը ճուռը ճամփայ ին շանց տւի ու իրանք էլ ստիպում ին, վուր ս. Ստեփանոսի պէս՝ արգարը լին աղունակի պէս՝ միամիտ... իմ հին դոստ Պէպօի պէս՝ հալալ, խղճով ու նամուսով

մարթ, ու հաշաքար չին՝ Արութին Ձիմգիմօվի պէս, տակէմէն խալիչա քաշող՝ Ամբարցում Պիգպիգովի պէս, ջաղուքեալ՝ Գալուստ Մուզմուզելովի պէս, ու մասնիչ՝ սիւ-Կոստօի պէս... ու գիժ չին ու գրուստ չխօսին, վունց որ իս:

Գիժ-Կակուլի



ՄՈՒԼԸ-ՆԵՍՐԷԿԻՆԸ—ՈՐՊԷՍ ԲԺԻՃԿ

Ինչպէս եղաւ մի անգամ, Ալու աչքերը խիստ ցաւեց. Եւ դեղ ու գիր անելուց Խեղճի նարը կըտրեց:

Անա մի օր եկաւ Ալին, Գոսա գիտուն մ'եր մոլլին Եւ աղաչեց, որ մեր խօջան Մի դեղ անէ իր ցաւին:

—Ես դեղ գիտեմ, ասաց մոլլան, Դու հանգիստ կաց, ա՛յ Ալի, Ան սեւ կուպրը, լից աչքերըդ, Ես քո ցաւին խիստ կօզնի:

Հիանդն խկոյն գնեց կուպրը, Կապեց ցաւած աչքերին, Բայց կուրացաւ երկու աչքով, Հողը քաշեց իր գլխին:

Կատղած Ալին գրնաց գրտաւ, Ու հայնոյեց մեր մոլլին—
—Տունդ քանդի, ա՛յ դու խօջա, Էս ի՞նչ բերիք իմ գլխին...

—Ես ի՞նչ անեմ, գոսաց մոլլան, Կամ ինչո՞վ եմ մեղաւոր, Ես լաւ գիտեմ, որ սեւ կուպրը Մի լաւ դեղ է գօրաւոր, Բայց ի՞նչ անեմ, որ մի ցաւի Ես օգնում է անպայման, Իսկ մի ուրիշ ցաւի համար Ես չի՛ դառնում մի դարման...

Մարտան



ՅԱՐԳԵԼԻ ԽՄԲՅՊԻՐ

Որովհետեւ հայկարան խմբագիրներից պահանջում են, որ իրենց յօդածները իրենց սիրած ուղղագրութեամբ տպւի, այդ պատճառով ես էլ իբրև հայկարան խմբագրի յօդածս իմ ուղղագրութեամբ տպէք:

Պարզանանց տօնը

Այս տարի մեր քաղաքում Պարզանանց տօնը սուտրականից շքեղ կատարեցաւ, արժապետները արդապետների հետ ճառեր կարդացին և նկարագրեցին Պարզանի քաջութիւնը և Պասակի դաւաճանութիւնը, Պարզանի առաքինի գործերը, Պասակ մասակար ուղղութիւնը: Հանդէսը լերջացաւ ուրախ տրամադրութեան տակ:

Յողածս գրեց Ղալայի Մարգարի քեռին:

Մեծապատիւ խմբագիր

Գլխանց ասեմ, որ ես «ւ» տառը չեմ ընդունում, ուստի յողվածս իմ ուղղագրութեամբ կըտպէք:

Կրօնը մեր դպրոցներում

Շատ ցավալի երեմոյթ է, որ մեր դպրոցներում կրօնը յանձնում են անհմուտներին և միամտաբար կարծում են թէ անհավատները հավատ կընեք շնչին աշակերտների հոգու մէջ, եվ ապագային դրանց աշակերտները արդիմնավոր եվ օգտավետ անդամներ կըդառնան ազգի, եկեղեցու եվ մանավանդ ընդհանուր մարդկութեան համար: Ոչ պարտններ, անհավատ կրօնուսոյցները մի մի գերասաններ են, որոնց պէտք է վանդիլ դպրոցներից:

Յողվածս գրեց Ղալայի Մարգարի խորդ աղբէրը:

Մեծարելի խմբագիր


Գլխանց ձեզ զգուշացնեմ, որ ես «ու» սկան եմ, չլինիմ, չիմանամ յողուածիս ուղղագրութեանը դիպչէք:

Նողուարդ անունով մի վարդապետ կար: Այդ մարդը վեղարը փոխեց մի կնոջ հետ. «Հայր սուրբ» տիտղոսը օտքերի տակ դրեց, «պարոն»-ը գլխու վրայ: Նա իբրև թէ առաջուց չէր հասկացել լուսաւորչական եկեղեցու դաւանութիւնը: Վարդապետ դառնալուց յետոյ համոզուեցաւ, որ իր կարծիքով բոլոր եկեղեցական գործերը վարսագրուած են կեղծ ստտուած-պաշտութեան տակ: Նա սկսեց քարոզել, որ ներկայ ժամանակուայ եկեղեցին շատ է հնացել, պէտք է քանդել և՛ նոր եկեղեցի շինել: Բայց բարեխառաբար այդ նոր Արիտի քարոզները այրեցին և իրան էլ ծաղրեցին: Այդ պատճառով ինատ արեց, վեղարը տուեց՝ կնիկ առաւ, բայց և այնպէս՝ նա քաջ զինուոր է, դեռ իր փայտէ հրացանը ձեռին կուտում է քամու ջրաղացների հետ:

Յողուածս գրեց Ղալայի Մարգարի խնամին:



—Ես ձեզ սիրում եմ...



... —Ես ձեզ սիրում եմ...

Պատվարժան խմբագիր

Քանի մտէս չէ յեւէր ասեմ, որ ես ոչ մի ուղղագրութիւն չեմ ընդունում. ուրիմն ինչպէս գրեմ այնպէս պիտի տպէք:—

Ուղղագրութեան մասին

Այրէք, ի՞նչ ուղղագրութիւն, ի՞նչ բան: Դատակ բանի համար ինչո՞ւ էք յիրար պող կտորում: Ի՞նչ իրավունքով աշագերտին հարգագրում էք. այստեղ «ւ» գրի, այնտեղ «վ» գրի, այստեղ «տ» գրի, այնտեղ «դ» գրի: Սա բունագրութիւն է. դուք դրանով խլում էք աշագերտի ազատութիւնը, կաշկանջում էք նրա ձեռքերը և քցում էք նրան անդանիկի դրութեան մէջ: Ի՞նչ սէր Աստուծոյ, թողէք ձեր փիլիսոսպայութիւնները և թոյլ տւէք աշագերտներին ազադ գրելու: Ոչ մի փաստ չի հասնի մեր ազգին. եթէ աշագերտը մի տեղ գրի հավ, մի ուրիշ տեղ գրի հաւ. երբեմն գրի օծ, երբեմն էլ գրի օժ կամ օց: Օրինակ եթէ ես գրեմ մածուն, դու էլ գրես մածուն, նա էլ գրի մացուն. ինչ փաստ ունի: Ուրեմն ինչ տատառով էլ որ գրենք, դարցեալ մածուն է և ոչ գարաք:

Յօթվածս գրեց Ղալաչի Մարգարի ետրանը:

Բարեկրօն խմբագիր

Ես որպէս Լ. Մարկոսեանցի կուսակից առաջարկում եմ իմ սիրելի ազգին. ջնջել Մեսրոպի տառերի միջից ո, ե, ու, իւ, յ, վ, և այլ տառերը և գրել այսպէս.

«Մէր յայրէնիք թշւառ անտէր

Մէր թշւառօց ւօտնակօխ,

Յօր ւօրդիքը արդ կանչում է

Հանել յօր վրէժ քէն ու ւօխ.

Ահա եղբայր քեզ մի դրօշ

Դօր իմ ձէռու գործեցի

Գիշերները էս քօն չէղա

Արտասքօր լւացի

Տես. «Մշակ» № 118, 1910 թ.

Յօղածս գրեց Ղալաչի Մարգարի հալալ ազգէր Գէրբասը

Գազէթաճի աղայ.

Հրամանքիս ազիզ քոնին, խորդ ախպարս, թաղայ ինձամիս, սրտ եօղաշի ետրանս, հալալ ախպար Գէրբասս գուզին հրամանքիդ գագէթին հետ զոնշմիշ յըլլին, բազի հավայ նօքհարութեն գուզին էնէ: Հմը աս ալ հրամանքիդ այեան յըլլի օր աս մարդիկը ինչ չեշիդ օր գրին, յում օր քիւֆուր էնին պիտի տպիք, ան ալ իրենց գրածի պէս. իրաւունք չունիք հէջ դիրմալ փոխելու: Աս ալ հրամանքիդ արդ էնիմ օր քեռիս, ինձամիս, ետրանս, էրկու ախպարս, մէ մալ ես ինքս հրամանքս ժեներալ Ղալաչի Մալ գարս—աս վեց հօգի մէ օրմ ինք աշխար էկիր, մէ օրմ ալ պիտի մեռնինք, մէ չեշիտ խասիթ ունինք, մէ չեշիտ քիսպադ, մէ տեղ հաց կուտինք, մէ կառավարի վրայ քնինք կը, մէ տեղ գարթնինք

կը, մէ տեղ խնդանք կը, մէ տեղ գուլանք, վեցս յիրար հետ մէ հարմ մէ մարմ ունինք: Վէ՛լ օր աս հանելուկը գտաւ, ես անոր պղնձները սաղ տարիմ բաղիհավայ դալայեմ:

Ղալաչի Մարգար



ՕՐԻՈՐԴԻ II ՆԱՄԱԿԸ ՀՈՍՀՈՍԻՆ

Յարգելի Կարօ.

Ձեմ գիտեր թէ ի՞նչ էր պատահել ինձ, որ շարունակ ուզում էի ուսումնարանի դասերը շուտ վերջանայ, որ փակեամ բակից ազատեմ: Ամեն մի դասը ինձ համար դառնում էր մի մի օր, որի տանելը թուում էր շատ դժուար: Անհամբեր սպասում էի հինգերորդ դասի զանգի ձայնին. վերջապէս զանգակի ձայնը հնչեց, և ես ազատեամ բանտարկեալի նման վազեցին փողոց: Ուսումնարանի դռնից դուրս գալու ժամանակ, ես տեսայ որ դուք կանգնած էք փողոցի անկիւնում: Ուզում էի բարևել ձեզ, բայց որովհետև լաւ չէիք հագնւած՝ չբարևեցի, նրա համար որ, ընկերուհիներս պիտի ասէին թէ՛ ինչպիսի «կոօ» կաւախը է ձարել: Ես նկատեցի, որ դուք ուզում էիք մօտենալ ինձ, և ձեր ձեռքին բռնած նամակը տալ: Ես իսկոյն երեսո շուտ տի, որ հետս լինողները չկասկածեն, որ մենք նամակագրութիւն ունինք մէկ-մէկու հետ:

Այդպէս վարւելու համար ներողութիւն կանչէք: Ինչպէս տեսաք դուք, ընկերուհիներս ստիպում էին ինձ, որ նախ քան ուսումնարանից տուն գնալը, գնանք գրօտնելու Գալաւիտիկին՝ մինչև յոգնելը, և ապա տուն գնալ ձաշելու:

Բայց ինչ արած, ես համաձայնեցի միասին գրօտնելու, թէև տեսնում էի, որ դուք հետևում էք ինձ: Երևի տեսնում էիք, թէ ինչպէս սիրուն տղաներ խոնահ բզրուխ էին տալիս մեզ, և մենք էլ ժպտերես բարևում էինք նրանց:

Ձկարծէք թէ մեզ հետ գրօղնող պարոններն օտար մարդիկ էին. կըստաւէք. նըրանք մեր վարժապետներն էին: Եթէ մենք շարաթններով չսովորենք դասերը, մեզ ոչ մի վատ թւանշան չեն դնիլ մեր «կավախը» վարժապետները:»

Ի՞նչ շատ չյոգնեցնելու համար, ես պատճառ բերեցի ընկերուհիներին, որ թամամը շի քարւանսարայից «վիշիվկա» պիտի գնեմ ուրաշկիս համար:

Բաժանելով մեր խմբից շտապով մտայ քարւանսարան, ուշք չդարձնելով նըստած պրիկաշչիկների «համեցէքներին», միւս դռնից գուս գալով դիմեցի դէպի տուն: Տուն հասնելով, մօրիցս թագուն՝ քրոջս ուղարկեցի ձեզ նամակը բերելու: Երբ քրոջս նամակը բերեց ես ժամանակ չունե-

ցայ որ իսկոյն և եթ կարդամ ան, որովհետև ուստա Փանոսի թողը հրատարակէր «Ինձ «վեչերի», միևնոյն ժամանակ. ցոյց տալով ընկերուհիներին, թէ քանի հատ ծանօթ կաւախը ունի: Երկուցեան մօտ ժամը եօթին գնացի վեչեր, ինձանից առաջ արդէն եկել էին բաւականաչափ մեր Յոզիանեան դպրոցի աշակերտուհիները, և ներսիսեան դպրոցի աշակերտները: Մեզ մեղադրում են, որ «Յոզիանիստները» միշտ համակրում են «Ներսեսեանիստներին». ապա այն անշորք սիտարները, խարազները ինչ գործ ունէին մեզ մօտ, միասին ժամանակ անցկացնելու համար:

Վեչերը սկսեց մանդալինիստների «АХЪ ЗАЧѢМЪ ЭТА НОЧЬ»-ով, որը մի քանի անգամ կրկնել տւինք:

Նրանից յետոյ «ДУРАКЪ» խաղացինք. իմ նստարանի ընկերուհիս իշի նման 14 անգամ գոաց, կարծես Օրթաճալից կանաչի բերող էջ լինէր:

Փոքր դասարանի աշակերտուհին 5 անգամ աքլորի նման կանչեց: Մտքովս անցաւ, թէ իրտեղ է Ալօճենց «շանդակիք» Արտաշը, որ շնորքը ցոյց տար:

Ես երկար չմնացի «վեչերում». շուտով տուն վերադարձայ և մտայ անկողին ու սկսեցի մտածել մեր երկուսիս ապագայի մասին:

Ահա թէ ինչ էի մտածում ես: Մտածում էի, որ՝

Ձեր հարսները գուլպա են գործում.

—Ես այդ չեմ անի—տեսնողը ի՞նչ կասէ:

Ձեր հարսները կանուխ են քնում.

—Ես չեմ կարող վաղ քնել—մութ տեղը ձեմ հետ կարելի է խօսել:

Ձեր հարսները թատրոն չեն գնում.

—Ես առանց թատրոն չեմ մնայ—յիմար կասեն:

Ձեր հարսները երկուցի չեն գնում.

—Ես չեմ կարող յետ մնալ—նոր կաւախի ճրտեղից ձարեմ:

Ձեր հարսները երեսները չեն ներկում.

—Ես ի՞նչպէս չներկեմ—ուրիշներից հետ մնամ:

Ձեր հարսները բարձր կրունդ կօշիկ չեն հագնում.

—Իսկ ես ցածր կրունդ կօշիկ չեմ հագնում—բոյս կարճ կերեայ:

Ու էսպէս շատ ու շատ բաներ էի մտածում...

Առաւօտեան նամակը կարդալով՝ շատ զարմացայ, որ իմ գրած հասցէն սխալ է եղել ձեզ համար: Բայց ոչ, այդ տեսակ հասցէ եմ տել ձեզ նրա համար, որ ձեր ուղարկած, կամ ուրիշ կաւախներն ուղարկած նամակների բովանդակութիւնը ծնողներս չիմանան: Եթէ ձեր նամակը այդ տեսակ հասցէով գրէք, և պոստի արկղը պցէք ես միւս օրը դասիցս ետ կըմնայի, և կըստանայի ձեր ուղարկած նամակը, որ ոչ մի մարդ չիմանար: Այդ տեսակ նամակներ ստացողները միշտ կեղծ անուն ապագոտնով են ստանում: Ես էլ կեղծ անուն եմ

գրել ձեզ: Եթէ Աստուած մեզ արժանացնի միտեանց հետ նշանելու, այն ժամանակ կըզրեմ խոհական անուն ազգանունս, և փողոցի խոհական անունը: Էլ դուք նեղութիւն միք քաշիլ նամակը ձեռքով ինձ տալու. գրէք իմ այս հասցէով. Тифлисть, до вась требование № 1001. Աստղիկ:

Գրուել և հրատարակեց Վարդի Փուլ



Խ Ն Դ Ի Բ

Երկու կին, որոնցից մէկը հագած է լինում նոր մօզայի նեղ շրջագետ, իսկ միւսը՝ նորագոյն մօզայի շաւար, միաժամանակ դուրս են գալիս մէկը Միխայիլովսկուց, իսկ միւսը՝ Սօլօխից և գնում դէպի Գօլօվինսկի կաւալէրների հետ ժամանակ անցկացնելու համար:

Իմանալ նրանք ճրտեղ և ճրքան ժամանակից յետոյ իրար կըհանդիպեն, եթէ նեղ շրջագետատուր կինն անում է կաքաւի նրման երեք վերջոկանոց քայլեր, իսկ շաւարատուրը ուխտի նման՝ երկու արշնանոց:

Ով այս խնդիրը վճռի նրան կընւիրեմ իմ անտիպ օրացոյցներից 500 օրինակ այն պայմանով, որ տպագրի և կէսը վերագործնի ինձ:

Փարեմուզ



Փ Ե Լ Ի Է Տ Օ Ն

ՀՈԳԵՀԱՐԱԶԱՏԻՆ ՄԵՐ ՍԻՐԵՑԵԱԼ

Համագային Ղալայչիպետին Մարգարի Խաթաբալայեան

Յոյժ սիրելիդ մեր!

Ընթերցայ խորիմաստ նամակն Քո ի մէջ ազգօգուտ «Սաթարալային» -- ուղղեալ առ մեզ: Մերեմ գրեզ, Ղալայչի Մարգար, զի փորձառութեամբն քո և խորիմաստ գիտութեամբ կարողացար ճանաչել զամենաարժանաւոր ընտրելին, որ է՝ դուստա ձնդրիկ Արեղայս: Օրհնութիւնն հանապազօրեայ Ալէքսանդրապօլցոց թափեցի ի վերայ խորիմաստ ոտներաց քոց, ամէնու Ոտներացդ աշխմ և ոչ գլխոյդ, քանզի նամակէդ, որ տպեալ կայ ի մէջ «Սաթարալային», երեկ և դու ինքնին պնդես, թէ խելք իմաստութեան քո ամփոփեալ է ի մէջ ոտացդ:

Մերեմ գրեզ, դու շաք մի հարցմունք և ապա խորհուրդք տաս ինձ, ըստ որում և ահա անօրինեմ--

1) Քանզի պատաս մի բորիկ եմ յատուածարանութիւնէն և լեզագիրութիւնէն,

Կ Ո Վ Կ Ա Ս

Ալէքսանդրապոլ.— Ինչ ձմրանից մեր աշխատանքները ետում են և մինք մի բուպէ պարապ չհնք մնում: Սովորականի նրման մեր խաղաղ գործերով ենք զբաղած. այսինքն առաջւայ նման խմում ենք, ջարդում, փշրում... Թղթխաղը, փառք Աստծու, այս տարի կատարելապէս առաջ է գնում և բարգաւաճում: Մարդ ձեռնելու դէպքերը, գժրախտաբար, շատ քիչ է լինում: Ցանկալի էր, կրկնէր յաճախ, որովհետև սուանց զբան հասարակական կեանքը մեռած է:

Օրիորդական շուկայի արամագրութիւնը, պէտք է ասել, որ վերջին ժամանակներս թուլացել է: Արլաների աճուրդը նկատելի կերպով առաջ է գնում: Պանգոկների յաճախորդների թիւը հեղհեղ է աւելանում: Դա մի ուրախարի երևոյթ է: Ժողովրդի արամանութիւնը վատ է, որովհետև փողոցներում այս քանի օր է քիւֆուրների չի լաւում, այն միակ բանը, որ կագուում է գրիմրեցիների կեանքի համեմբ. անշուշտ գժար է աւանցի զբան ապրելը. ցանկալի էր նորից ու նորից այդ համեմբ փողոցներում վաճառելիս լինէր:



Մի օտար հայ ընտանիք ամառան տօթերին, իբրև ամառանոց Բաթումից գնում են Արդւին և իջևանում ուստա Պետրոսնոց տանը: Նորեկները Արդւինից ամեն կերպ գոհ են մնում, միայն շուկայի հեռաւորութիւնը նրանց մի քիչ դժւարութիւն է պատճառում, բայց այդ պարտաւորութիւնն էլ տանտէրն է յանձն առնում կատարել:

Մի անգամ նրանք ուստա Պետրոսին խնդրում են, որ բազար գնալիս չմոռանայ և իրենց համար մէկ ֆուլստ կովի իւղ բերել:

— Բաշ ուստա (գլխուս վրայ), ասում է ուստա Պետրոսը ու գնում կնոջ մօտ:

— Այ կնիկ, ինչ կասես, մեր կենդանիքը մի ֆուլստ կովի իւղ են ուզում. նրանց լեզուով իւղ ի՞նչ կարող է լինել:

— Անպատճառ դուղ է, վճարան կերպով պատասխանում է կինը:

Եւ ուստա Պետրոսը կնոջ խօսքերից համոզւած դնում է շուկայ և մէկ ֆուլստ ոչխարի դուղ առնում, բերում է տուն: Կենդանիքը ուղեղը տեսնելով անզուսպ կերպով սկսում են ծիծաղել: Իսկ մարդ տ կին իմանալով ճշմարտութիւնը, որ նրանք եղին իւղ են ասում՝ իրանք էլ իրենց հերթին նրանց վրայ են ծիծաղում:

Ո

Արդւինի, ուստայ նոր տիրապետութեան ժամանակ, այնտեղի կառավարիչը (նաշալ-

ուտի և ինձ օղնական կարգիմ զամենագէտն սրբազան Մաղաքիայ, շնորհիւ որոյ վարին համայն հայ հոգեւորականութեան բարձրացիլ թէ յաչս օտարաց և թէ մերայնոց: Իրտեմ, զի «դուրդուրականք» յոյժ ի զայրութ բռնեալ, բարկանան, սակայն՝ յորժամ մեծամեծաց և պարագլխեաց նոցա տամ պաշտօնք իւղալի՝ ոմանց ի ճեմարանի, ոմանց յազգային դպրոցս և ոմանց ի պլանին Մայր Աթոռոյ, որ է՝ ախոռատունն, յայնժամ ոչ միայն սկսանին գովաբանել զիս, այլ և Մաղաքիայ սրբազանն, խոշտանգումն նորա որ ի Պօլին, յայտարարելով գործ «խաֆիէից» և դաւաճան չարամտաց:

2) «Հովիտն» ինքնին խաղաղ և հայկրօնական խերթ գոլով, սկսանի դովիլ զէջմիածինն և վարկ նորա ոչ խօթեցել ի մէջ ցեխին, քանզի Սամսուն մեր Չէքքեզեան, որոյ գրական գոյութիւնն ու գործունէութիւնն սկսանի և սահմանափակի Օրմանեան սրբազանի միայն, իբրև հայ էմիլ Զօլա, տեսեալ վերականգնումն պատուոյն անմեղ Դրէյֆուսին—Օրմանեան, փառաւորեալ ինքնին, մի կողմ շարտէ գրիչն: Միւրդաշիւրն ի մայրաքաղաքէն դադարի յարձակել աջ և ահեակ մանւանդ եթէ սրբազան Օրմանեան

երկտող մի գրեսցէ դեռ: Գարեգինն Ենգիւրարեան—վանս պատուելոյ և գնահատելոյ գործունէութիւնն Օրմանեանի՝ համարեսցէ գեր քան զՇորհալին: Տէր-Եղնիկն, վան ընծայելոյ նմա վանաց Մայր եկեղեցւոյ կանձարկղէն փոխարինարար վերցրեալ գումարն, սկսանի ամենայն գովաստիք բարբառել վասն էջմիածնի: Եւ այսպէս, «Հովիտն» և հովիտականքն գարձին թոնոյ էջմիածնականք:

3) Վասն շահելոյ սիրտն «Մշակի», զԲագրատ վարդապետն կարգիմ քարտուղար զիւլանին, Հաջի-Աղան և Քալանթարն ազատ մուտ գործելով վեհարանն, ամենայն ինչ գովաբանեն:

4) Հրամայեմք՝ քահանայից, սարկաւապաց, դպրաց, մղղնեաց, զի ամենեքին պարտադիր կերպով ստացեն զազգօգուտ «Սաթարալայն» լիցի բարեցեակամ էջմիածնի:

5) զՄէլեան կարգիմ «զբան երէց» կաթողիկոսարանի և ամենայն ոլորապտոյտ հարց, որ խելքն իմ ոչ հասանի և սրբազանն Մաղաքիայ քանզի ոչ է բաջ ծանօթ կովկասեան փօլիթիքային, Մէլեան խորամանկ հարապիտութեամբ և հեռատեսութեամբ գիացէ հնար մի և մեր ազատիմք ի փորձանաց «փորձչին»...



ներկը) ուզում է շրջակայ գիւղերը շրջադա-
յել:

Առաջին հանգրիցած գիւղում մի հայ
մանրավաճառ երիտասարդ իր գիտցած
ուսուցիչն մի հաս «գրատոր» բառով ըս-
տանձնում է թարգմանի պաշտօնը և հա-
մարձակ կերպով «գրատորին» փոխանակում
է նաշալնիկի հետ:

—Հարցրէք խնդրեմ գիւղացիներին, պա-
րոն երիտասարդ, ասում է կառավարիչը,—
այստեղ ձեռք ժամանակ թրքան ձիւն է լի-
նում:

Երիտասարդը ՇԻՖԵՆ բառը թիւրքերէն
սինէզ (մեղու) կարծելով յայտնում է գիւ-
ղացիներին, որ կառավարիչ էֆէնտին ան-
հալ մեղր է ուզում:

Գիւղացիները անմիջապէս ամէն լիբը
ընտիր մեղր են բերում և հրամցնում նրան:

Նաշալնիկը մեղրը տեսնելով՝ գլուխը բա-
ցասական կերպով շարժում է և կրկնում իր
նախկին ՇԻՖԵՆ բառը:

Անպատճառ հալածն է ուզում, մտածում
է երիտասարդը և ասում գիւղացիներին,
որ հալած մեղր բերեն:

Վերջապէս տեսնելով կառավարիչը, որ
ինքը համբերի աշխարհն է ընկել, ստիպ-
ւած գրպանից հանում է մի թուղթ փոք-
րիկ կտորների մանրելով՝ բարձրից թա-
փում է գետին:

—Հն, հասկացայ, հասկացայ՝ ձիւն է ա-
սում, բաղականչում է երիտասարդը:

—Էհ, մենք էլ հասկացանք, պատասխա-
նում են գիւղացիները:

Խառնակ

ՆԱՄԱԿ ԳԱՆՁԱԿԻՅ

Մեր ծխական և տարբական դպրոցների
ներկայ անմխիթար գրութիւնը խոր մտա-
տանջութեան մէջ է ձգել տեղիս ժողովրդին,
և նրանք երկար ժամանակ չեն կարողա-
նում պատճառն փնտնել, թէ ինչու այդ
դպրոցներում ուսանող աշակերտութիւնը
ոչինչ չէ սովորում, այլ և նրանցից շատե-
րը, մի տարւայ ընթացքում նոյն իսկ տա-
ռերը ջուկել չեն կարողանում:

Մինչ ժողովուրդը այդ գրութեան պատ-
ճառները որոնելով էր գրազւած՝ յանկաշձ
նրանց օգնութեան է հասնում մեր աւագ
երէցի մազալու քարոզը, որը նա ասել է ս-
Յովհ. եկեղեցում բազմաթիւ ժողովրդի և
քաղաքիս ծխական ու տարբական դպրոց-
ների աշակերտութեան ներկայութեամբ:

Աւագ երէցը աշակերտութեան հասցէին
ուղղած խօսքերում հետեւեալն է ասում.

—Բալիկներ. ուզում էք գիտութիւն սո-
վորել, որ համապատասխան լինի նորեկ ման-
կավարժական կանոններին՝ պէտք է որ ձեր
վարժապետների «հրդուհները» (ուղեկ) լի-
նի մեծ և գլուխները լիբը (ինչպէս մեր
Գարօյնը): Հակասակ դէպքում ձեր հրդու-
հները և գլուխները վարժապետների նման
կըմնայ դարգակ...

—Բալաներս. բացի այդ գիտէք, որ ղեր-
ջին տարիներում հողաբարձուների հաստ
գլուխների շնորհիւ, մեր ծխական դպրոց-
ներում վարժապետ անեան սակ այնպիսի
դալլաքներ են պաշտօնավարում, որոնց
ածիլի աղպեցութիւնից՝ ձեր արեւը վկայ
եմ ասում, մեր Գարօյն գլուխը դարալա, ոչ
թէ գուք ոչինչ չէք սովորել, այլ և մեկ

նման գլուխը լսելով լիբը անկողնից
լսելը գլուխներից կըթռչնէ շնորհիւ

Ժողովուրդը ի նկատի ունենալով տէր-
տէրի ստոծի ճշտութիւնը՝ մի ժողովում
որոշեց մեր վարժապետների «հրդուհները»
մասնազէտ յանձնաժողովի ձեռքով չափել, ու
«մեզանի» տակ ջարդելուց յետոյ «էքսպեր-
տիզեա» անել ու հետեւեալը «Պատարալա»-ի
միջոցով յայտնել հայոց ծխական դպրոց-
ների բարեբուժան համար գլուխները
«գրաւ դրած» թեմական խորհրդի մանկա-
վարժ անդամներին:

Նախքան հրդուհների չափն սկսելը, վար-
ժապետները միաձայն բողոքեցին ժողո-
վրդի աշղպիսի որոշման դէմ, և աւար-
կեցին՝ որ աշակերտներին գիտութիւն չը-
սովբեցնելու պատճառը ոչ թէ իրենց «հը-
ղուհները» պուշուր լինելն է, այլ այն՝ «որ
գիտութիւնն արդէն իր նպատակին հասել
է»: Եւ իբրև ապացոյց՝ բերին ձեռքներում
բռնած «Մշակ»-ի ամբողջ 272 №-ը, որտեղ
Գանձակի կարդինալ «Սարգօն» գրել է.
«Եթէ Վասիլին յաջողի թոչել Գանձա-
կից—Թիֆլիզ, կարող ենք ասել, որ գի-
տութիւնը իր նպատակին հասած կըլինի»...

—Իսկ Վասիլը վաղուց թոնկ է Թիֆլիզ...
յանձնաժողովն անուշազիր թողեց վարժա-
պետների բողոքը, պատճառաբանելով, որ գի-
տութիւնը միայն «Սարգօյն» հրդուհում է իր
նպատակին հասել և նրան էլ վարժապետ-
ների հետ միասին ուժով վզակոթներին
տալով չափեց հրդուհները, որից ստացւեց
հետեւեալ լեզուիցիան:

Վարժապետների հրդուհները քիչ բացա-
ռութեամբ չափեց գուրս մեծ եղան, (մա-
նաւանդ երաժշտագէտ և սոմարագէտ Իվա-

6) Հրամայեմք զմեզ ասեան դպրոցս գոր-
ծածել ուղղագրութիւնն և, որ է՝ դասա-
դիրքնն Ղ. Աղայեանի, գերեզասան դրպ-
րոցս ուղղագրութիւնն վ—ուղղութիւն հայ-
կարան Ս. Մալխասեանի և թեմական դրպ-
րոցաց ու, դասագիրքքն Ս. Մանգիսեանի
և այսպիսով ամենեքին սպառն գրեանքն
իւրեանց և վերստիցի դալմազալն ու շիթ-
թութիւնն և երեքին ուղղագրագէտքն հան-
գերծ խնամիօք, քաւորօք և սանահօրիւք
դոն մնացեան և փառաբանեսցին զԵջմիա-
ծինն և պահակալն իմաստուն:

7) զՍրբազանն Գէորգ կարգեմ տեղակալ
սոյնու պայմանաւ, զի յետ թաղման գեր-
կուս կաթողիկոսս զՊրիտեան և զԳմբի-
րեան, իշտան ոչ ունեսցի թաղել և գերբոր-
դըն, քանզի հերթն իւրեանն է:

8) զՍոսրիաս Արհին կարգեմ նախագահ
վանական միաբանութեան այնու պայմա-
նաւ, զի իւր հաշուով ամեն շաբաթ և հինգ-
շաբթի օրքն փառաւոր խորտիկօք ճաշկե-
րոյթ տայցէ համայն միաբանութեանն:
Շնորհիւ ձօն սեղանին վերացի խնովու-
թիւնն և միաբանութիւնն էջմիածնի եղի-
ցի «Միաբան»...

9) զԵմբրեմ նորընծայ սրբազանն կարգեմ
տեսուչ թաղման մեծատանց, որոյ իրա-

ւատութեանն յանձնի գնահատել և սակար-
կել թաղումն հարուստ ննջեցեացի ի գու-
թին եկեղեցեաց: Յուսամք, զի յետ երկ
ամաց համայն եկեղեցիքն դաստան գերեզ-
մանատունը:

10) զՄեսրօպ սրբազանն վարգեմ ան-
սուշ նարանեաց, ստալով իրաւունս բնա-
կիլ ի քաղաքն Սողոմ-Գոմոր (որ է Բագու)
և կարգադրել գործք սպահարգանից: Ար-
գիւնքն մեծ կղիցի:

11) Վասն գրաւելոց սիրտ հոստոսկանաց
բոլոր եպիսկոպոսաց որ ի Պօլիս—տամար-
քութիւն, վարդապետաց — ծայրագունու-
թիւն, քահանայից—լանջախաշ, էֆէնդեաց
օրհնութեան կոնդակ, ժողովրդեանն՝ ան-
ւամբ կոտորածի, հրկիզման, անբերիու-
թեան և այլն, և այլն, և այլն բազմաթիւ
կոնդակք վասն նանգանակութեան ի սահ-
ման Կովկասու, որով սաճկահայք ևս ա-
ռուտի սիրով շողկապեն ընդ էջմիածին,
քանզի նոքա միայն «տուր» գիտեն և մեք
տալք անխնայ:

12) Պարսկաստանի փրկեմ յԱռաւմտային
պատուհասէն, հրախրելով յէջմիածին զԱյ-
վաղեան Կայսերապետն և ի տեղի նորա կար-
գելով զճարտարախօսն Բենիկը Հրամայեմք
Կարապետին սրբազան՝ զճանապարհածախ-


քնն դուրսերականաց վճարել և հեռացնել
Ղարադաղէն, քանզի վասն պաշտպանու-
թեան ժողովրդեանն օրքան և մնացեան,
այնքան և ժողովրդի տունն քանդեցին:

13) Համաձայն եմ շաթիւրք և թւանքչիք
կարգել յազգային գիւնարաց, սակայն երկն-
չիք, զի դժգունեալ դիւազանալ հագուստն
նորեկելով և տրեխքն փոխելով լակիրօվան-
նի կոչեցեալ երկարալիկ կօշիկաց, նման
անցելոյն, մտրակ առեալ ի ձեռին, աջ և
ձախ շրխկացուցեն և հերթն նոյն իսկ ինձ
հասանի... Թօրս կղիցի. լաւ է կրկնակի
ոօճիկ տայցեմ նոցա, թաք հետու կացցեն
էջմածնէն:

Եւ զսիրելիք մեր Ղալաշի Մարգարն
կարգեմ ազգային դալայչիպապետ, տալով
հակ մի բամբակ, լիար մի նաշադիր և փութ
մի կալաչիկ, զի մաքրեսցես յազգային հիմ-
նարկութիւնսդ տեսեալ ժանգակալիալ պղինձ-
քըն և ամանշամանքն:


Հայրական օրհնութիւնն մեր թափեցի
ի վերայ քո, ամէն:

Ազօթարար ձեռիկ Արեղայ



ները) և բաղկացած այնպիսի բաղադրութիւններից, որոնց մէջ ամեն բան կը գտնէք՝ բացի մանկավարժութիւնից: Աստուի ևս՝ պիտոյ կարող են լինել խաշապաններին:

Մոծակ



ՕՐ. ՈՍԿԵՆՆԵՐԻՆ

Հայելին դրած ստաճի՛ր՝
Ի՞նչ ես դիտում—մըտախոհ
Եւ այդ շուշան մերկ լանջիդ
Դեղին նայում—ինքնագոհ,

Ի՞նչ ես ուղղում մագերիդ
Դանդաղները—քրմահան
Եւ թօթափում՝ աչքերիդ
Վառ կայծերը—ծախ ու աջ...

Չարմանում ե՞ս հրաշագեղ
Դեմքիդ վերայ, նագելի՛,
Որ գերել է շատ անմեղ
Պատանիներ-տըռփալի.

Թէ՛ կարծում ես, որ նորան՝
Ո՛չ վերջ ունի, ոչ—վախճան,
Կամ, ինչպէս վարդ—անթառամ,
Նա կը ծաղկի յարմար՝...

Բայց այդ ինչո՞ւ հայելում
Չառանցում ես ոռներէն
Եւ, երբեմն է՛լ, բըլբըլում
Մի քանի քառ գաղղիբէն.—

Պարծենում ե՞ս նորա մօտ,
Որ գիտես շատ լեզուներ.
Թէ՛ ճէնց ամեն սուսուտ
Ա՛յդ է դերը—պատուաբեր...

Երանի՛ քեզ, օրիորդ,
Որ ունես շատ արժանիք՝
Եւ բո շորքը, ինչպէս որդ,
Միշտ սողում են պատանիք...

Կեցցէ՛ մայրըդ—հարազատ,
Որ կըրթեց քեզ «նոր հոգով»:
Որ սընուցեց, Ոսկեհատ,
Քեզ օտարի քողըր կաթով...

Հայն ի՞նչ է որ,—մի անկիրթ,
Երկտանի խօսուն արջ.
Մորս լեզուն—կոպիտ, բիրտ,
Իսկ անունը—«կոտրած փարչ»:

Ապա ուրեմ՛ն՝ մի՛շտ զգոյշ կաց,
Որ հայ լեզով չըխօսես,
Կամ հայ մարդուն՝ մոռացած—
Յանկա՛րժ ձեռքըր չերկարես...

О, не дай Богъ.—Շէնց իսկոյն
Դու կըլինես գեղաթասի
Եւ այտերըդ—վարդագոյն՝
Կրդակաման մահու չափ...

Լիլիպուսի



Ե Ր Ե Ք Դ Ե Ղ Ա Տ Ո Մ Ս

(Իերմանական երգիծանք)

Տիկին Իւլիան պառկած էր մահւան մահճում. երիտասարդ, գեղեցիկ Իւլիան—օ, ահաւոր վիշտ: Նա բոլորովին թուլացած էր, գունատ. խօսում էր բարակ, ճնշւած ձայնով.

—Օ, ի՛մ սիրելի ամուսնիկ, մարդ ուղարկիր բժշկի հասկից, թող նա շուտ գայ, եթէ ոչ, ես զգում եմ որ... ես մեռնում եմ այս անգամ:

Եկաւ բժիշկ, քեռի Բենեամինը: Նա մի շատ բարեհոգի և շատ խելօք մարդ էր:

—Ա՛խ, յարգելի բժիշկ, ի՛մ սիրելի կինը հիւանդ պառկած է, ասում էր տիկին Իւլիանի ամուսինը.—մեռնում է: Փրկեցէք նրան, ինչ գնով էլ ուզում է լինի. թէկուզ այդ արժեհայ հազար տալիք...

—Հաւանական է, որ հէնց այդքան էլ ծախուի, ոչ պակաս, ասաց բժիշկը:

Եւ նա, նստելով հիւանդի սնարի մօտ, սկսեց դիտել նրան, աչքերը թարթել, բըլբմընջալ, լսել, իսկ քիչ յետոյ նա դէմքին լըջութիւն տւեց և միայն մի խօսք արասանեց.

—Հը՛մ...

Այդտեղ հիւանդի ամուսինը անհանգիստ և երկիւղով բժշկին կանչեց մի կողմ և հարցրեց.

—Ի՞նչ, յոյս չկա՞յ...

—Ոչ, ընդհակառակը, — պատասխանեց քեռի Բենեամինը.—բայց այս, իսկապէս, հազար տալիք կարող է արժենալ, եթէ ոչ աւելի: Սպասեցէք, ես այս բոպէիս գեղատոմս կը գրեմ:

Երբ բժիշկը դեղատոմսը գրեց, հիւանդի ամուսինը նրա վրայ կարգաց հետեւալը.

«Ն... հրապարակի վրայի արքունական

կօշիկների խանութի ցուցակը գնում արեւած է մի զոյգ կանացի կեղծարարի պատկեր, աթլայից և արծաթեայ կոճակներով: Բեղարկեցէք շուտով բերեն»:

Եւ երբ կիսակօշիկները բերին, խելացի բժիշկ, քեռի Բենեամինը մօտեցրեց նրանց մահամերձ հիւանդ տիկ Իւլիանին և նրա ձախ աչքի ասաջ բռնեց մի առժամանակ:

—Այդ ինչ գեղեցիկ կիսակօշիկներ են,— բացականչեց հիւանդը,— ինչպէս հեշտ կըլինի դրանցով պարելու ժամանակ պտուել: Բայց, ա՛խ, ես այնպէս հիւանդ եմ. ես այլևս չեմ կարող պարել և պտուել...

—Այդ դէպքում ես պարտաւոր եմ մի գեղատոմս ևս գրել,— ասաց խելացի բժիշկը:

Եւ նա նստեց ու գրեց, իսկ հիւանդի ամուսինը կարգաց.

«Մե՛ծ փողոցի վրայ գտնւող «Օ-բօն-Մարշէյի» խանութի լուսամուտի առջ կախ աւած է մի բաց վարդագոյն մետաքսեայ սիրուն զգեստ, պատրաստած պարիզեան ժանեակներով և ոսկեայ ծոպերով: Նա արժի չորս հարիւր տալիքից ոչ աւելի, յամենայն դէպս, բայց հարիւրից պակաս»:

Երբ այդ պատրաստի հագուստը բերեց, հրաշագործ բժիշկը ցոյց տւեց այն խեղճ Իւլիանին, բռնելով նրա աջ աչքի առաջ: Մի վայրկեանի մէջ հիւանդի աչքերը փայլեցին պայծառ, կենդանի փայլով,—բայց նրա բերանը թոյլ ձայնով հազիւ շշնջաց.

—Ա՛խ, այդ ինչ գեղեցիկ զգեստ է. ուրքան նա սաղ կը գար իմ դիրքին... Բայց ես հիւանդ եմ, ինչ արած, սիրտս քիչ է մնում կտոր-կտոր լինի:

Այդտեղ այժմ ի՛նչ էր մնում անելու. բարի բժիշկը մտածեց և նորից մի գեղատոմս գրեց, և ամուսինը կարգաց.

«Կար անող տիկ, Բիւլի արհեստանոցի առաջ ցուցադրւած է մի կանացի գլխարկ սովորական երկձի կտորների անիւների մեծութեամբ, պարզարւած է ջայլամի իսկական փետուրներով. նրա վրայ էլ մի քորոց կայ, որի գլուխը իսկական բըլբանտ է: Արժի մէկ և կէս հարիւր տալիք, հաւանական է, ոչ աւելի»:

Եւ երբ անիւի մեծութեամբ փեղոյրը բերին, յարգելի բժիշկը մօտեցրեց այն մահամերձ հիւանդի դէմքին, պահելով ուղիղ նրա երեսի դիմաց: Այդ ժամանակ խեղճ տիկ. Իւլիան բարձրացաւ անկողնից և նստեց. նրա այտերը ծածկեցին կարմիր գոյնով և նա շշնջաց.




—Ա՛խ, որքան չնաշխարհիկ, սքանչելի գլխարկ է: Ինչպէս հրաշալի՛, փափուկ փետուրներ ունի... Այն կինը, որ կը ծածկի այս գլխարկը, պէտք է որ իշխանուհի, թագուհի կոչուի... Բայց ես հիւանդ եմ մահամերձ... Ա՛խ...

Եւ խեղճը նորից փուեց բարձի վրայ:

—Ա՛խ, բժիշկ, թանգազին բժիշկ, ինչպէս երևում է, ի՛մ կինս իսկապէս պատրաստում է մեռնելու...

—Այ՛ն, հաւանական է, նա կարծես թէ

Մ Ս Ս Ս



Ց Ի Ր Կ Ո Ւ Մ

—Ասան ինձ սիրունիկս, կինը էրբ է իրեն, երջանիկ գգուն.
—Երբ որ յիմար, ու հարուստ ամուսինն է անհնամախ.



ՏՄՂԱՆՆԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԱՍՏԻՃԱՆԱԲՈՐ

սկսում է մեռնել, սակայն մենք փորձենք մի ուրիշ միջոց.—ասաց բարի բժիշկը:

Եւ նա կանգնեց լուսամուտի առաջ, իբր թէ հրճում էր հրաշագեղ օրւայ գեղեցկութեամբ, մինչդեռ խեղճ տիկ. Իւլիան ըսկսում էր մեռնել:

—Ինչ հրաշալի է օրը, որքան սքանչելի եղանակ է,—հանգիստ ինքն իրեն խօսում էր բժիշկը.—բոլոր մարդիկ դուրս են եկել զբօսանքի, ուրախ ու զւարթ շրջում են նրանք ամեն տեղ. նայեցէք, անա ձեր հարևանուհին, հպարտ տիկ. Մարգարիտան: Նրա հագին անեղնագործ մետաքսեայ ըզգեստ կայ և ինչպէս է նա խշրտում, ինչպէս է շրջում: Եւ նրա գլխին մի փեղոյր կայ արծաթեայ ծոպերով և վարդագոյն ժապաւէններով. անա քեզ փեղոյր, այ, խկապէս փեղոյր... Բոլոր անցորդները կանգնում ու ակնապիշ նրան են դիտում և զարմացած աչքերով հետևում են նրան ու շրջընջում միմեանց. «Այս ինչ տեսակ զգեստ է, այս ինչ փեղոյր է և ինչ սքանչելի կին է այս Մարգարիտան: Նա ամբողջ քաղաքում ամենաառաջնակարգ գեղեցկուհին է»:

—Ի՞նչ: Ամենագեղեցկուհի՞ կին...—բացականչեց մահամերձ հիւանդ տիկ. Իւլիան.—Ո՛ր է իմ նոր փեղոյրը: Ո՞րտեղ են նոր կիսակօշիկներս: Ո՞րտեղ է նոր զգեստս... Եւ մի ակնթարթում նա դուրս թըռաւ անկողնից. հագաւ կիսակօշիկները և զգեստը:

Ամբարցեց գլխին փեղոյրը և այնուհետև դուրս եկաւ արևի ճառագայթներով ողողւած կենդանի փողոցը:

Այնտեղ նա միացաւ իր գեղեցիկ հարեւանուհի Մարգարիտային, և, անցորդները երբ տեսան այդ երկու կնոջը միասին, ասացին միմեանց.

—Ձէ, ոչ թէ տիկ. Մարգարիտան, այլ տիկ. Իւլիան է ամենագեղեցիկ կինը ամբողջ քաղաքում:

Եւ երբ տիկ. Իւլիան լսեց այդ խօսքերը, նրա սիրտը թեթևացաւ և նա զգաց, որ ինքը բոլորովին առողջ է:

Իսկ բարի բժիշկը գեռ շարունակում էր կանգնել լուսամուտի մօտ և բախտաւոր ամուսինը ասում էր նրան:

—Օ, անգին, թանգագին բժիշկ, ինչպէս շնորհակալ եմ ձեզանից, որ դուք վերադարձրիք իմ սիրելի կնոջ առողջութիւնը: Եւ ես այնքան էժան պրծայ, ընդամենը մի քանի հարիւր տալիքով, բայց ոչ հազար, ինչպէս ենթադրում էինք...

—Ի հարկէ,—նկատեց բժիշկը,—նա դարձեալ կատարելապէս առողջ է և, մինչև այդ նոր զգեստի ու փեղոյրի նորաձևութիւնից դուրս գալը, ես այլևս հնարաւորութիւն չեմ ունենալ այստեղ գալու: Իսկ իմ այցելութեան հաշիւը ես յետոյ կուղարկեմ...

ԱՆՆԵՐԵԼԻ ԹԻԻՐԻՄԱՑՈՒԹԻՒՆ

Մարդը.—(Ի՞նչ զանգալը քաշում է):
Կինը.—(Անկողնուց դուրս է գալիս և միանգամայն մերկ՝ դուռը բացում):

Մարդը.—Այդ ի՞նչ անքաղաքավարութիւն է... պէտք է գիտենալ, որ այդ նման խայտառակութիւնները ինձ միանգամայն զգուշիկ են:

Կինը.—Ախ, ներքի ինձ, հոգեակա, ես չկարծեցի, որ զանգահարողը դու ես:

Մարդը.—Ուրեմն...

Կինը.—Ուրեմն այդ մի անմեղ, բայց և աններելի թիւրիմացութիւն էր իմ կողմից:
Լիլիպուտի



Ո Ր Ի Ե Ի Ա Յ Ր Ի Կ Ի Ն Ը

(Փրանսիական երկրի մասը)

Տիկին Տօրիսենը՝ երեք ամուսին թաղելուց յետոյ՝ ամուսնացաւ չորրորդի հետ: Եւ անա՛ նոր ամուսինն արդէն ապահարզան է պահանջում:

—Ախր ինչ՞ե է:

—Նրա համար, որ ես արդէն երեք նախորդներ ունիմ:

—Բայց չէ՞ որ նրանք մեռել են:

—Երևակայեցէք, թէ ի՞նչ է արել կինս. նա իր ըուղուարում՝ երեքի պատկերն էլ կախել է: Մորուսաւոր բժիշկ, ոսկէ ակնուցաւոր պրոֆէսոր, հաստ զօրապետ,—սրանք բոլորն էլ թունաւորում են ամուսնական բախտաւորութեանս ամենալաւ բոլակները: Վեց աչք անխիղճ կերպով՝ ակնապիշ ինձ են հետևում... Դա ինձ ճնշում, տրամազրուծիւնս ոչնչացնում, մեղցնում է: Կնոջս ասում եմ. «զոնէ քաղցրութեան, բնքշութեան բոլակներին այդ պրօֆէսսըրի, բժըշկի և զօրապետի երեսները շուռ տուր պատի կողմը»: Գիտէք ի՞նչ է նա ինձ պատասխանում.—«բանի կենդանի եմ՝ երբէք, Այդ երեք ամուսիններս երբէք չեն խանդոտում, և ես՝ նրանց պատկերներին նայե-

լով՝ կըբոտ բոլակներս և քաղցրութեանս ակնապիշներն են զգում: Բնքշութեանս կեր, հրը դու էլ չես լինիլ, այդ դէպքում չորրորդ տեղը քեզ է պատկանում, իսկ քո սիրելի կիլին միտթարանք կըզգայ հինգերորդի՝ քեզ յաջորդողի գրկում...»:

Հիմա ձեզ եմ հարցնում. միթէ սա ընտանեկան բախտաւորութիւն է: Է՛հ, զրթախտ ամուսին: Ասենք մենակ նա չէ այդպէս, միևնոյն դրութեան մէջ շատերը կան:


Օրինակ՝ հէնց իմ բարեկամը, որ ամուսնացել է նոյնպէս որբայրի կնոջ հետ. նրա կինն ամուսնու ականջին իր առաջին մարդու բոլոր հասարակական և անձնական արժանաւորութիւնների մասին այնքան է սղզացրել, որ խեղճն ականջները հարինք ունի այժմ:

—Ախ, թէնդորն այնպէս խելօք, այնպէս բարի էր... Ի՞նչ չես սիրում չէ՞ հորթի միս: Իսկ թէնդորս ուղղակի սքանչանում, պաշտում էր այն...

—Կըհաւատամս,—պատմում էր ինձ բարեկամս,—Վիքտորիան նոյն իսկ փաղաքշանքի բոլակներին շնջում է ականջիս. «ախ, ինչ կուպիս կերպով ես ինձ գրկում... Ինչպէս քնքշաբար ինձ գրկում ու համբուրում էր իմ խեղճ թէնդորը»:

Երևի, նա էլ շուտով ապահարզան կըպահանջի:

Թարգմ. Կ. Ռաբուրեան



Ամուսնու երկար բացակայութեան ժամանակ տիկին Գոհարիկը մի որդի ծնեց:

—Որքն պէտք է շնորհակալ լինեմ այս թանգաղին ընծայի համար, ասաց օտարութիւնից նոր վերադարձած ամուսինը իր կնոջը՝ ակնարկելով նորամուսնուկի վերայ:

—Ի հարկէ ամենակարող Աստուծոն, որը՞ քո բացակայութեան ժամանակ անգամ առատապէս թափում է իր բարիքները մեր օրհնեալ տան վրայ:

—Սակայն, ցանկալի է իմանալ՝ ո՞ւմ միջնորդութեանն եմ պարտական Աստուծո բարիքները մեզ հասցնելուն համար:

—Քս ամենամտերիմ ծանօթների և ընկերների:

Լիլիպուտի

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ի Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Բացած է 1911 թ. բաժանորդագրութիւն

»Լ Ո Յ Ս«

Գրական-Հասարակական շարաթաթերթի (Ներքոյ սարի).

«ԼՈՅՍ»-ի բաժանորդագրիւնը.—Ն. Նախիջևանի, Ռաստովի ու շրջակայ հայ գիւղերի համար տար.-3 ր. կէս տ.-2 ր. 3 ամ.-1 ր.: Ռուսաստանի այլ տեղերի համար—տարեկ. 4 ր., կէս տար.-2 ր. 50 կ. և 3 ամ.-1 ր. 50 կ.: Արտասահ. տար.-6 ր. կէս տարին 3 ր. Համարն ամեն տեղ արժէ 10 կոպ.: Հասցէն՝ Нахичевань н.д. Въ редакцію армянск. журнала „ЛУЙСЪ“.

Թժը.-Նրատ. Բժ. ԳէՈՐԳ Ի Ի Ի ԶԵԱՆ



ՎԱՃԱՌՈՒՄ ԵՆ

ՄԱՐԿԱԿ

Կոմպոզիցիոն

Շ Ք Ե Ղ Կ Ա Ջ Մ Ո Վ

1906 թ.	5 ր.
1907 թ.	7 ր.
1908 թ.	7 ր.
1909 թ.	7 ր.
1910 թ.	7 ր.

Հին համարները հատով թիֆլիսում 10 կոպ., թիֆլիսից դուրս 12 կ. Դիմել՝ «Սաթարալա»-ի գրասենյակին:

МАГАЗИЪ

Композиция

Тифлисъ. Пушкинскіи пассажъ № 8

ГРОМАДНАЯ ЭКОНОМІЯ

шведскаго композиціон. бѣлья.

Поситсаъне менѣе двухъ лѣтъ

Постоянный большой выборъ свѣжаго товара.

Воротниковъ, манишекъ и манжетъ.

по фабричнымъ цѣнамъ.

Передѣлка въ любой фасонъ бесплатно

Продюются портняжныя принадлежности, какъ-то пуговицы, подкладки, мѣлъ и прочѣе.

Имѣется также галантерейный

Отдѣлъ

00—35 М. А. КАЛТАКЯНЦЪ

Բ Ժ Ի Ծ Կ

ՓԱՆՕ ՄԱՆԴԵՆԵԱՆ

Մասնագիտութիւն՝ ՄԻՋԱՍԵՌՈՒԿԱՆ, ԼԵՆԵՐԱԿԱՆ և ԿԱՇՈՒ հիւանդութիւններ:

Ընդունում է հիւանդներ իր սեփական ամեն օր առաւ. 9—12 և երեկ. 6—9. Ելիզաբետեան փող. № 28, 00—78

Բ Ժ Ի Ծ Կ

Ե. Ի. Միլաստսկի

ներքին և երեխայոց և ստամոքսա-աղիքային հիւանդութիւնների, պրոֆ. MATHIEU-ի մասնագիտական կլինիկայից Պարիզում:

Ընդունելութիւնը առ. 9—11 ժ. երեկ. 5—7 ժ.: Ելիզաբետինսկայա, 39: 100—78

Ցանանկալով մեր բոլոր բաժանորդներին ամենայն տեսակ բարիք, մենք կործանում ենք ենք տալիս բաժանորդագրել և ամենօրեայ հայերէն ամենամեծ ու օգտակար

ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Գրական, քաղաքական, հասարակական և առևտրա-արդիւնաբերական լրագրին, որ գեկտեմբերի 1-ից հրատարակոււմ է ամեն օր, այն ուղղութեամբ և այն ծրագրով, որ ունեցել է սկզբնաւորութեան օրից և որը գոհունակութիւն է պատճառել ընտիր և բանիմաց հասարակութեանը:

«ՍՈՒՐՀԱՆԴԱԿ» տարեկան բաժնեգինն է 10 ր., կէս տարւանը 6 ր. Սակայն «ԽԱՔԱԲԱԼԱ»-ի բաժանորդների համար պատրաստ ենք զիջել և տալ հետևեալ գներով.

«ՍՈՒՐՀԱՆԴԱԿ» և «ԽԱՔԱԲԱԼԱ» միասին
Տարեկան 12 ր. Երեք ամիս 4 ր. — կ.
Կէս տարին 7 ր. Ամիս 1 ր. 50 կ.
Մեր հասցէն՝ Թիֆլիս, ռեդակցիա «Սուրանդակ»,
Հեռագրով՝ Թիֆլիս, «Սուրանդակ»

ՊԵՏՐՈՍԻ ՍՊԻՏԱԿԵՂԷՆԻ ԽԵՆՈՒԹ


ԿԻՐՇԵՆՈՒՄԻ ԵՒ ՏԵՐ-ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆԻ

Գօլովինսկ. պրօսպ. ա. Չուբալովի

ՍԵՂՈՆԻ Զ Ա Մ Ա Ր ՍՏԱՑԻԱԾ ԵՆ

մեծ քանակութեամբ ամեն տեսակ ապրանքներ—առուսական և արտասահմանեան ֆաբրիկաներից: Բոլոր ապրանքները ձեռք են բերւած առաջին ձեռքից և նշանակաւ են Շ Ա Տ Է Փ Ա Ն Գ Ն Ե Ր Օտար քաղաքների պահանջները կատարոււմ են Հ Ո Ւ Տ Ա Փ Ո Յ Թ ԵՒ Ճ Հ Տ Օ Ր Է Ն 00—5


ԹԻՓԼԻՍՈՒՄ ԲԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ԵՒ ԴԻՐՔՈՎ ԱՌԱՋԻՆ ԱՐԱԳԱՏԻՊ ՄԵՔԵՆԱՆԵՐ ԽՐՕՄՕ-ԼԻՏՕԳՐԵՓԻՆ Ա. Ի. ԲԻԽՈՎԻ (ԵՐԱԵՄԻ ԵՆՆ ԱՏԱ) Գօլովինսկի պրօսպեկտ, տուն Օրոյսանի, տելեֆօն № 433. Յայտնում է ի գիտութիւն պ. պ. պատէր սուղների, որ վիմագրատունը ամբողջովին իմ սեփականութիւնը դառնալով, նշանաւոր չափով ընդարձակեց և աւելացաւ նոր կօնստրուկցիայի և ամենամեծ դիրքի արագատիպ մեքենայով իր բոլոր օժանդակիչ պարագաներով: Այս հանգամանքն ինձ հնարաւորութիւն է տալիս պատէրները կատարել շուտ, ճշտութեամբ և ԱԻԵԼԻ ԷՓԱՆ միւս վիմագրատներից: ցանկանալով վիմագրական գործը կովկասում հասցնել իր արժանի բարձրութեան, ես չեմ խնայելու ոչ մի ծախս, որպէսզի բաւարարեմ ժամանակակից տխրիկային: Յոյս ունիմ, որ պ. պ. պատէր սուղները, առանց ուշադրութեան չեն թողնի վերև յիշածներս և կը պատեն ինձ իրենց պատէրներով, իսկ ես իմ կողմից ամեն ջանք գործ կը դնեմ բաւարարելու պահանջները: 20—20 Յարգանքներով—Ա. Ի. ԲԻԽՈՎ



Օ. Մ. ՄԱՆՈՒՄ

— Գոհ եմ սիրելիս, մեր ամուսնությունից:
— Այնքան էլ չէ. շատ պրոզայիկ բան է ամուսնությունը, իսկ ես բանաստեղծություն շատ եմ սիրում:
— Ես կարող եմ ոտանաւորներ էլ գրել:

Վ Ա Ր Դ Ա Ն Ա Ն Ց Տ Օ Ն Ի Օ Ր Ը



Թշառին թշառն է միշտ մխիթար,
Եւ որտեղ կրգտնէք դուք քանդիւ թշառ,
Քաղցած կամ յիմար, եւ կամ խելագար,
Որ գործերը թողած դեկլամատոր դառնար,
Հիմի էլ տի՛նք. հիմի էլ տի՛նք՝ երբ մեր թշառին—
Օղին ու գինին մտել են մեր փորին
Իսկ դուք, հայեր՝ ականջ չէք դնում մեր լաց ու կոծին,
Ծերկայացումներին հրէք չէք գալի,
Ասացէք խնորեմ, հայեր ի՞նչ անենք. հիմի էլ տի՛նք...

Ռ. Չ. ՄԱՆՈՒՄ